

Բ.էն ստացուած սիւները, փոխարէն անոնց՝ որոնց կը փափաքէր խալիֆան: Թ. դարու սկիզբը այս եկեղեցին տակաւին չէր կործանուած: 808 ի Պաղեստինի մէջ կազմուած Commemoratorium de casis Dei անուամբ յիշատակարանին մէջ կը կարգացուի որ Յովսափատի այս եկեղեցիին մէջ կային, բացի վանականներէ, քսան և վեց կոյսեր: Նոյն թուականին Եպիփան վանականն ալ կը գրէ թէ Գեթսեմանիի մէջ կը գտնուէին հարիւր կոյսեր, որոնց իր խցիկէն ուղղութիւն կու տար մենակեաց մը՝ իր պատուանէն դիտելով: Այս կոյսերուն յատուկ էր Գեթսեմանիի վերնայարկ եկեղեցին՝ ուր կը պահպանէին Տիրամօր Գերեզմանը:

3. Գերսեմանիի Ս. Ասուածածին եկեղեցին Խաչակրաց ժամանակ.

Ս. Կուսի Գերեզմանի եկեղեցին ԺԱ. դարուն քանդուած էր, հաւանաբար Խաչակիրներուն կողմէն Երուսաղէմը պաշարուած ժամանակ. վասն զի նոյն դարու ժամանակազրկներէն յայտնի է թէ Խաչակիրները Երուսաղէմ մտնելէ յառաջ քանդուած էին քաղաքին պարսպէն դուրս մնացած սրբավայրերը, որոնցմէ մին էր Ս. Աստուածածնի եկեղեցին, որ թէև կործանուած էր, բայց Ս. Կուսի Գերեզմանը անաղարտ կը մնար: Լատին զբաւման առաջին տասը տարիներու մէջ նոյն տաճարը աւերակոյտ մ'էր: 1106ին Դանիէլ վանահայր իր այցելութեան առթիւ կը նկարագրէ թէ «փայտեայ տանիքով մեծ եկեղեցի»ին աւերակներուն դիմացը կը գտնուէր: Ֆրանկ յաղթականը՝ Godefroy de Bouillon Ս. Քաղաքին զբաւումէն յետոյ մտադրեց վերաշինել կործանեալ տաճարը. սնոր հրաւերին ընդ փոյթ առատաձեռնութեամբ պատասխանեցին իշխանազունները և կղերականք, և իսկոյն 1112 ին գործի սկսան, Ս. Կուսի Գերեզմանի պահպանութիւնը կազմակերպութեան տակ առնուեցաւ, 1130ին ալ տաճարին վերաշինութիւնը աւարտեցաւ: 1154ին Իտիրիա՝ Գեթսեմանիի մէջ այցելութիւն կու տար Սիքքի Մայրիաւնին նուիրուած մեծ և գեղեցիկ եկեղեցիին: Կեզրոնի խորը մասնակի կերպով այժմ տեսնուած այս եկեղեցիին վերաշինութեան թուականը տարակույս առարկայ չի կրնար ըլլալ: